



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 70 - Ն

«30 ԳույնՏեղի» 2022

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Համաշխարհային պատմություն» առարկայի 7-րդ և 10-րդ դասարանների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի նոյեմբերի 30-ի N 70 Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-ՐԴ և 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ
Համաշխարհային պատմություն
7-րդ դասարան

Օրինակելի ծրագիր

1. Զաղաքակրթությունների առաջացումը Հին Արևելքում:
2. Անտիկ քաղաքակրթություններ. Հին Հունաստան, Հռոմ:
3. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Ամերիկայում:
4. Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևելքում:

Թեմա 1	
Զաղաքակրթությունների առաջացումը Հին Արևելքում:	
Նպատակ	
Ձևավորել հնագույն քաղաքակրթությունների անցած ուղին վերլուծելու և մեկնաբանելու հմտություն, առօրյա հասարակությունների վրա ունեցած ազդեցությունը գնահատելու կարողություն:	
Ուսումնասիրման հարցեր	
<ol style="list-style-type: none">1. Ո՞րոնք են Հին Արևելքի քաղաքակրթությունների առանձնահատկությունները:2. Ինչպե՞ս են մեր նախնիների ստեղծած մշակութային արժեքներն արտահայտվում մեր օրերում, ինչքանո՞վ են դրանք արդիական:3. Կարևո՞ր է պահպանել նախնիներից մեզ հասած մշակութային արժեքները, ինչո՞վ:	
Հիմնական հասկացություն	Ենթահասկացություն
Զաղաքակրթություն	Կառավարում Փոխկապակցվածություն
Վերջնարդյունք	
<ol style="list-style-type: none">1. 7.1.1. Ներկայացնի հնագույն քաղաքակրթությունները, դրանց ձևավորման ու զարգացման ընթացքը, առանձնահատկությունները համեմատի միմյանց հետ:2. 7.1.2. Վերլուծի և համակարգի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները քաղաքական, տնտեսական, մշակութային, հասարակական համատեքստում:3. 7.1.3. Ուսումնասիրի հին քաղաքակրթությունների կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները՝ դիտարկելով այն որպես հասարակության զարգացման կարևոր բաղադրիչ:4. 7.1.4. Գնահատի հնագույն քաղաքակրթությունների ազդեցությունը արդի հասարակությունների վրա:	
Թեմայի բովանդակությունը	
<ol style="list-style-type: none">1. Հին եգիպտական քաղաքակրթությունը:2. Միջագետքյան քաղաքակրթությունը:3. Խեթական թագավորություն, Աքքեմենյան Իրան:4. Չինաստան, Հնդկաստան:	

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով 2. Դեպքի ուսումնասիրություն 3. 3D մոդելով միջավայրի ստեղծում 4. Սահիկաշարի պատրաստում 5. Ալբոմների, թղթապանակների ստեղծում 6. Ուսումնասիրելով իր համայնքը հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները: 	Օրինաչափություն Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները, առանձնահատկությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն -Քաղաքակրթությունների զարգացման աշխարհագրական միջավայրի ազդեցությունը: Լեզու, գրականություն - Պատմական տեքստերի ընթերցում: Մաթեմատիկա - Հաշվարկներ: Արվեստ - Պատմության արտացոլանքը: ՏՀՏ -սահիկաշարի ստեղծման, տեքստային խմբագրիչներով աշխատելու հմտություններ:	
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 2, Հ 8, Հ15, Հ17, Հ25, Հ26, Հ28, Հ30, Հ 31, Հ44,	

Թեմա 2	
Անտիկ քաղաքակրթություններ. Հին Հունաստան, Հռոմ	
Նպատակ	
Ձևավորել անտիկ քաղաքակրթության կազմավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, նորարությունների ունեցած դերը ժամանակակից աշխարհի վրա ցույց տալու և գնահատելու հմտություն:	
Ուսումնասիրման հարցեր	
<ol style="list-style-type: none"> 1. Ո՞րոնք են անտիկ քաղաքակրթությունների առանձնահատկությունները: 2. Ո՞րն է անտիկ քաղաքակրթության ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: 3. Արդյո՞ք հնարավոր է պատկերացնել արդի աշխարհի զարգացումը առանց անտիկ քաղաքակրթության: 	
Հիմնական հասկացություն	Ենթահասկացություն
Գլոբալ փոխազդեցություն	Ժամանակ, տեղ, տարածություն, Չարգացում
Վերջնարդյունք	

1. Վերլուծի անտիկ քաղաքակրթությունների ձևավորման և զարգացման գործընթացները, առանձնահատկությունները համեմատի միմյանց հետ:

1. Վերլուծի այն գործընթացները և գաղափարները, որոնք հանգեցրին անտիկ քաղաքակրթությունների կործանմանը:

2. Ուսումնասիրի անտիկ քաղաքակրթությունների կողմից ժամանակի մարտահրավերները հաղթահարելու գործընթացները՝ դիտարկելով այն որպես հասարկության զարգացման կարևոր բաղադրիչ:

3. Գնահատի անտիկ քաղաքակրթությունների ձեռքբերումները և ազդեցությունը արդի հասարակությունների վրա:

Թեմայի բովանդակություն

1. Հունական քաղաքակրթության սկիզբը, զարգացումը, անկումը:
2. Հունական քաղաքակրթության քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքը:
3. Հունական քաղաքակրթության ձեռքբերումներն ու ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա:
4. Հռոմեական քաղաքակրթության սկիզբը, զարգացումը, անկումը:
5. Հռոմեական պետության քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքը:
6. Հռոմեական քաղաքակրթության ձեռքբերումներն ու ազդեցությունը ժամանակակից աշխարհի վրա:
7. Հելլենիստական աշխարհ. մշակութային ժառանգություն, համաշխարհայնացման առաջին փորձերը:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով 2. Դեպքի ուսումնասիրություն 3. Սահիկաշարի պատրաստում 4. Բանավեճ 5. Դերային խաղ 6. Համագործակցային աշխատանք 7. Նախագծային աշխատանք 	<p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Անհատի դերը և գործունեության պատմության հոլովոյթում:</p> <p>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:</p>

Միջառարկայական կապերը թեմայում

Աշխարհագրություն - Զարտեգի ճանաչում:

Հայոց լեզու և գրականություն - Հունական առասպելները, տեքստերի ընթերցում:

Արվեստ - Հունական արվեստի առանձնահատկությունների ուսումնասիրում. նկարչություն, երաժշտություն, պար:

Մաթեմատիկա – Ձեռքբերումները՝ հաշվարկները, չափումները:

Հասարակագիտություն – կառավարման համակարգերի ուսումնասիրում:

ՏՀՏ-սահիկաշարի պատրաստման, տեքստային խմբագրիչներով աշխատելու հմտություններ:

Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ

Հ 2, Հ 8, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 27, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 39, Հ 44,

Թեմա 3

Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևմուտքում և Ամերիկայում

Նպատակ

Ձևավորել Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման և անկման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, դրանց ունեցած ներդրումն արդի աշխարհում գնահատելու հմտություն:

Ուսումնասիրման հարցեր

1. Ո՞րոնք են Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների առանձնահատկությունները:
2. Ի՞նչ ներդրում են ունեցել Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունները համաշխարհային քաղաքակրթության մեջ:
3. Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել արդի աշխարհի զարգացումը առանց Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթության:

Հիմնական հասկացություն

Ենթահասկացություն

Փոփոխություն

Հարաբերություններ
Պատճառ-հետևանք

Վերջնարդյունք

1. 7.3.1.Վերլուծի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:
2. 7.3.2.Յետազոտի և ներկայացնի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների անկման պատճառները:
3. 7.3.3.Համեմատի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի առանձնահատկությունները:
4. 7.3.4.Գնահատի Արևմուտքի և Ամերիկայի միջնադարյան քաղաքակրթությունների ունեցած ներդրումը արդի աշխարհի ձևավորման վրա:

Թեմայի բովանդակություն

1. «Ժողովուրդների մեծ գաղթը» և Արևմտահռոմեական կայսրության անկումը. նոր պետությունների առաջացումը:
2. Արևելահռոմեական կայսրությունը (Բյուզանդիա):
3. Ռուսական պետություն:
4. Խաչակրաց արշավանքները և դրանց հետևանքները:
5. Անգլիան միջնադարում

6. Ֆրանսիան միջնադարում 7. Գերմանիան միջնադարում 8. «Ամերիկյան մինչկոլումբոսյան» քաղաքակրթությունները:	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն 2. Հիմնախնդիրների հետազոտում 3. Սահիկաչարի, թղթապանակի, ստեղծում 4. Փաստավավերագրական ֆիլմերի դիտում 5. Էքսկուրսիա վիրտուալ թանգարաններում	Համաշխարհայնացում Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Աշխարհագրություն - Զաղաքական և ֆիզիկական քարտեզ: Հասարակագիտություն - Զաղաքական համակարգեր: Գրականություն - Տեքստերի ուսումնասիրում ու վերլուծում, մասնավորապես՝ արաբական և հնդկական մաթեմատիկական դպրոցների վերաբերյալ: Մաթեմատիկա - Հաշվարկներ և խնդիրների կազմում: ՆՁԴ - Բանակների կառուցվածքի, գեների տեսակների ուսումնասիրում: Արվեստ - Զաղաքակրթությունների տարբերությունների արտացոլումն արվեստում: ՏՀՏ - սահիկաչարի պատրաստման, տեքստային խմբագրիչներով աշխատելու հմտություններ:	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հ 2, Հ 8, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 44,	

Թեմա 4
Միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման ուղին Արևելքում
Նպատակ
Ձևավորել Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման և անկման օրինաչափություններն ու առանձնահատկությունները վերլուծելու, դրանց ունեցած ներդրումն արդի աշխարհում գնահատելու հմտություն:
Ուսումնասիրման հարցեր
1. Ո՞րոնք էին Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների առանձնահատկությունները: 2. Ո՞րոնք են Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ: 3. Արդյոք հնարավո՞ր է պատկերացնել արդի աշխարհի զարգացումն առանց Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների:

Հիմնական հասկացություն	Ենթահասկացություն
Համակարգ	Նորարարություն Հեռանկար
Վերջնարդյունք	
<p>7.4.1. Վերլուծի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ձևավորման, զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները:</p> <p>7.4.2. Հետազոտի և ներկայացնի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների անկման պատճառները:</p> <p>7.4.3. Համեմատի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի առանձնահատկությունները:</p> <p>7.4.4. Գնահատի Արևելքի միջնադարյան քաղաքակրթությունների ունեցած ներդրումն արդի աշխարհի ձևավորման վրա:</p>	
Թեմայի բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Արաբական խալիֆայություն: 2. Մոնղոլական արշավանքները և «Եվրասիական» տերության ստեղծումը: 3. Չինական քաղաքակրթությունը միջնադարում: 4. Հնդկաստանը միջնադարում: 5. Ճապոնիան միջնադարում: 6. Թուրքական պետությունը միջնադարում: 7. Պարսկական պետությունը միջնադարում: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, աղբյուրների ուսումնասիրություն: 2. Հիմնախնդիրների հետազոտում: 3. Սահիկաշարի, թղթապանակի, ստեղծում 4. Փաստավավերագրական ֆիլմերի դիտում 5. Էքսկուրսիա վիրտուալ թանգարաններում 	<p>Ժամանակ և տարածություն</p> <p>Պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p>
Միջառարկայական կապերը թեմայում	
<p>Աշխարհագրություն - Զաղաքական և ֆիզիկական քարտեզ:</p> <p>Հասարակագիտություն - Զաղաքական համակարգեր:</p> <p>Գրականություն - Տեքստերի ուսումնասիրում ու վերլուծում, մասնավորապես՝ արաբական և հնդկական մաթեմատիկական դպրոցների վերաբերյալ:</p> <p>Մաթեմատիկա - Հաշվարկներ և խնդիրների կազմում:</p> <p>ՆՁՊ - Բանակների կառուցվածքի, գեների տեսակների ուսումնասիրում:</p> <p>Արվեստ - Զաղաքակրթությունների տարբերությունների արտացոլումն արվեստում:</p> <p>ՏՀՏ- սահիկաշարի պատրաստման, տեքստային խմբագրիչներով աշխատելու</p>	

հմտություններ:
Կապը Հանրակրթության չափորոշի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հ 2, Հ 8, Հ 15, Հ 17, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 44

**Համաշխարհային պատմություն
10-րդ դասարան**

1. Պատմությունն ու էս
2. Հին Արևելքի քաղաքակրթությունները
3. Անտիկ քաղաքակրթությունները
4. Հին աշխարհի մայրամուտը և Նորի սկզբնավորումը
5. Չարգացած և Ուշ միջնադար
6. Նոր աշխարհի հասարակական և մշակութային նկարագիրը

Թեմա 1	
Պատմությունն ու էս	
Նպատակ	
Ձևավորել պատմության փուլաբաժանումները դասակարգելու, պատմական աղբյուրները ճանաչելու, վերլուծելու, քաղաքակրթությունների ձեռքբերումներն ու բացթողումները գնահատելու կարողություն:	
Վերջնարդյունք	
10.1.1. Դասակարգի պատմության փուլաբաժանումները, մեկնաբանի պատմական գործընթացները: 10.1.2. Մեկնաբանի «քաղաքակրթություն» եզրույթը, դասակարգի քաղաքակրթության տիպերը: 10.1.3. Վերլուծի և գնահատի քաղաքակրթությունների ձեռքբերումներն ու բացթողումները: 10.1.4. Մեկնաբանի և համատեքստում կիրառի պատմական եզրույթները, վերլուծի պատմական աղբյուրները:	
Թեմայի բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Ի՞նչ է պատմությունը, պատմության պարբերացումը, պատմական աղբյուրները, պատմական գործընթացի կարևորությունը: 2. Քաղաքակրթության տիպաբանությունը. քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային: 3. Հնագույն քաղաքակրթությունների ազդեցությունը արդի աշխարհում: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ

<ol style="list-style-type: none"> 1. Աղբյուրների ուսումնասիրություն: 2. Հիմնախնդիրների հետազոտում: 3. Սահիկաչափերի պատրաստում: 	<p>Օրինաչափություն</p> <p>Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները՝ որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:</p>
--	---

Միջառարկայական կապերը թեմայում

Հայոց պատմություն - Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումները և Հին Արևելքի երկրները:
Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:
Հայոց լեզու - Լեզու և գիր, լեզվաընտանիք և ժողովուրդներ, գրային համակարգեր, գրանյութ, հնդեվրոպացիներ. տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:
ՏՀՏ- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասընթացի ժամանակ:

Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ

Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41:

Թեմա 2

Հին Արևելքի քաղաքակրթությունները

Նպատակ

Ձևավորել հինարևելյան հասարակությունների կազմավորման, զարգացման գործընթացների ազդեցությունը համաշխարհային պատմության համատեքստում վերլուծելու հմտություն:

Վերջնարդյունք

- 10.2.1. Հետազոտի հին արևելյան հասարակությունների ձևավորման և զարգացման գործընթացները, համեմատի և համադրի այդ հասարակությունները:
- 10.2.2. Վերլուծի հին արևելյան հասարակությունների ազդեցությունը համաշխարհային պատմական գործընթացների վրա:
- 10.2.3. Հետազոտի և ներկայացնի հին արևելյան հասարակություններում ձևավորված համակարգերը:
- 10.2.4. Գնահատի հին արևելյան հասարակությունների դերը արդի աշխարհում:

Թեմայի բովանդակություն

- 1. Հին Եգիպտական հասարակությունը: Քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:
- 2. Հին Միջագետքի հասարակությունը (Ք.ա. IV հազարամյակ - Ք.ա. 539 թ.), քաղաքակրթական ձեռքբերումները, և արդի հիմնախնդիրները:
- 3. Իրանական բարձրավանդակի պետությունները: Աքեմենյան աշխարհակալ

<p>տերությունը:</p> <p>4. Փոքր Ասիայի, Արևելամիջերկրածովյան երկրների և Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունները, քաղաքակրթական ձեռքբերումները:</p> <p>5. Հին Չինաստանի քաղաքակրթությունը, քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:</p> <p>6. Հին Հնդկաստանի քաղաքակրթությունը, քաղաքակրթական ձեռքբերումները և արդի հիմնախնդիրները:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, 2. Գրաֆիկական կազմակերպիչներ 3. Ֆիլմերի դիտում և քննարկում, 4. Կլոր սեղան-քննարկում, 5. Բանավեճ, 6. Էսսե: 	<p>Ժամանակ և տարածություն</p> <p>Պատմության 2րդադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:</p>
Միջառարկայական կապերը թեմայում	
<p>Հայոց պատմություն - Հայկական լեռնաշխարհը հնագույն ժամանակներում, Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները և Հին Արևելքի երկրները:</p> <p>Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով:</p> <p>Հայոց լեզու - Լեզու և գիր, լեզվաընտանիք և ժողովուրդներ, գրային համակարգեր, գրանյութ, հնդեվրոպացիներ. տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:</p> <p>Գրականություն - Աշխարհի առաջին Էպոսը, առասպելներ:</p> <p>Արվեստ – մշակույթի ուսումնասիրում:</p> <p>ՏՀՏ- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասընթացի ժամանակ:</p>	
Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ	
Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41:	

Թեմա 3
Անտիկ քաղաքակրթությունները
Նպատակ
<p>Ձևավորել Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների սկզբնավորման, զարգացման ու անկման օրինաչափությունները և առանձնահատկությունները վերլուծելու, անտիկ քաղաքակրթությունների ազդեցությունը ներկայիս աշխարհի վրա գնահատելու հմտություն:</p>

Վերջնարդյունք	
<p>10.3.1. Վերլուծի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ճևարման ու զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:</p> <p>10.3.2. Համեմատի անտիկ քաղաքակրթությունները Հին արևելյան քաղաքակրթությունների հետ:</p> <p>10.3.2. Չնահատի անտիկ քաղաքակրթությունների ձեռքբերումները՝ որպես հասարակությունների զարգացման խթան:</p> <p>10.3.4. Ներկայացնի Հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ազդեցությունը արդի աշխարհում:</p>	
Թեմայի բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Քաղաք-պետությունները և ժողովրդավարության դրսևորումները Հին Հունաստանում: 2. Հույն փիլիսոփաների գաղափարները՝ հասարակության զարգացման միջոց: 3. Պելոպոնեսյան պատերազմները. քաղաքակրթական ճգնաժամը Հին Հունաստանում: 4. Հելլենիստական մշակույթի ազդեցությունը արևելյան հասարակությունների վրա: 5. Հռոմեական հասարակության զարգացման փուլերը: «Հռոմեական աշխարհ»-ի գաղափարը: 6. Զրիստոնեության տարածումը Հռոմում. հասարակության կերպափոխումը: 7. Հունահռոմեական քաղաքակրթության ազդեցությունը. միջնադարից մինչև մեր օրեր: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Համեմատություն հունական և հռոմեական հասարակությունների և մշակույթների, ռազմարվեստի միջև: 2. Աշխատանք սկզբնաղբյուրներով: 3. Հիմնախնդիրների հետազոտում: 4. Սահիկաչարերի պատրաստում: 5. Էսսե: 	<p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը: Անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:</p>
Միջառարկայական կապերը թեմայում	
<p>Հայոց պատմություն - Հայկական լեռնաշխարհը հնագույն և հին ժամանակներում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների, հավատալիքների ու դիցարանի իմացություն, համեմատություն, Հայաստանը և Հին հունական ու հռոմեական քաղաքակրթությունները:</p> <p>Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով և ուրվագծային քարտեզներով:</p> <p>Հայոց լեզու - Բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:</p> <p>Գրականություն - Հոմերոսի պոեմները, հին հռոմեական գրականությունը, անտիկ պատմագրությունը և Հայաստանը:</p> <p>Արվեստ - Հին աշխարհի հրաշալիքներ, արվեստի գործեր:</p> <p>Հասարակագիտություն–կառավարման համակարգերի և հասարակությունների, փիլիսոփայական գաղափարների ուսումնասիրում:</p> <p>ՏՀՏ-տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասընթացի ժամանակ:</p>	

Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ
Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41:

Թեմա 4

Հին աշխարհի մայրամուտը և Նորի սկզբնավորումը

Նպատակ

Ձևավորել Հին աշխարհի մայրամուտի և Նորի սկզբնավորման պատճառները, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, համաշխարհայնացման դրևորումներն ու ներկայիս աշխարհի հետ բազմատեսակ կապերը հետազոտելու և վերլուծելու հմտությունը:

Վերջնարդյունք

- 10.4.1. Հետազոտի Հին աշխարհի հասարակական ճգնաժամն ու Նորի ձևավորման նախադրյալները:
- 10.4.2. Վերլուծի համաշխարհայնացման դրևորման ու զարգացման նախադրյալները, ընթացքն արևմուտքում և արևելքում:
- 10.4.3. Համեմատի անտիկ և միջնադարյան քաղաքակրթությունները, բացահայտի օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
- 10.4.4. Մեկնաբանի պատմական փորձը հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը:

Թեմայի բովանդակություն

- 1. Նոր պետությունների առաջացումն Արևմտահռոմեական կայսրության տարածքում: Հասարակության վերափոխումը:
- 2. Կաթոլիկ եկեղեցին և քրիստոնեական հասարակության ձևավորումը Արևմտյան Եվրոպայում:
- 3. Բյուզանդական «ուղղափառ» հասարակության ձևավորումը: Հոգևոր-մշակութային կապի խզումը Բյուզանդիայի և կաթոլիկ Եվրոպայի միջև:
- 4. Սասանյան Իրանը արևելք-արևմուտք հակադրության մեջ:
- 5. Իսլամի ծագումը: Արաբա-մուսուլմանական աշխարհի ձևավորումը, մուսուլմանական Իսլամի:
- 6. Չինական հասարակության արժեհամակարգի ձևավորումը միջնադարում:
- 7. Հնդկաստանի հասարակությունը միջնադարում. կրոնադավանաբանական ազդեցությունները:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով, 2. Հիմնախնդիրների հետազոտում: 3. Սահիկաչաբերի պատրաստում: 4. Խնդիրների առաջադրում, 	<p>Համաշխարհայնացում Հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները,</p>

<p>լուծումների ներկայացում և քննարկում: 5. Բանավեճ: 6. Քննարկում: 7. Էսսե:</p>	<p>դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:</p>
<p>Միջառարկայական կապերը թեմայում</p>	
<p>Հայոց պատմություն - Հայաստանը հելլենիզմի դարաշրջանում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների, դիցարանի իմացություն, համեմատություն: Հայաստանը և հելլենիստական աշխարհը: Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով: Հայոց լեզու - Բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում: Գրականություն-Հելլենիստական դարաշրջանի գրականությունը, պատմագրությունը և Հայաստանը: Արվեստ -Հին աշխարհի հրաշալիքներ, հելլենիզմի դարաշրջանի արվեստի գործեր: ՏՀՏ- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:</p>	
<p>Կապը Հանրակրթության չափորոշչի ավագ դպրոցի վերջնարդյունքների հետ</p>	
<p>Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41:</p>	

<p>Թեմա 5</p>
<p>Չարգացած և ուշ միջնադար</p>
<p>Նպատակ</p>
<p>Ձևավորել միջնադարյան քաղաքակրթությունների զարգացման և փոփոխման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, միջնադարյան քաղաքակրթությունների և ներկայիս աշխարհի առնչությունները հետազոտելու և վերլուծելու հմտություն:</p>
<p>Վերջնարդյունք</p>
<p>10.5.1. Վերլուծի Չարգացած միջնադարի տարբեր քաղաքակրթությունների զարգացման և փոփոխման առանձնահատկությունները: 10.5.3. Հետազոտի ձևավորված գաղափարներն ու գործընթացները, որոնք հիմք դարձան հասարակության փոփոխության համար: 10.5.2.Գնահատի միջնադարյան դարաշրջանի քաղաքակրթական ձեռքբերումները: համաշխարհային մշակույթի համատեքստում, ցույց տա մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու անհրաժեշտությունը: 10.5.4. Վեր հանի միջնադարի ու ներկայիս աշխարհի բազմատեսակ կապերը, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ:</p>
<p>Թեմայի բովանդակություն</p>

1. Մոնղոլ-թաթարական արշավանքները. քոչվորական հասարակությունից անցում դեպի «Եվրասիական տերության»:
2. Հարյուրամյա պատերազմը և դրա ազդեցությունը արևմտաեվրոպական հասարակությունների և պետությունների վրա:
3. Ռուսական պետության և հասարակության կայացումը XIV-XVI դարերում: Մոսկովյան Ռուսիա:
4. Թյուրք-մուսուլմանական զավթողական քաղաքականությունը և արևելաքրիստոնեական հասարակությունների ճգնաժամը: Օսմանյան տերություն:
5. «Մինչկյուլումբոսյան ամերիկյան» հասարակությունների զարգացման առանձնահատկությունները:
6. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները:
7. Չինական և ճապոնական քաղաքակրթությունը Չարգացած և Ուշ միջնադարում: Նոր հասարակությունների և պետությունների ձևավորումը:
8. Հնդկաստանի հասարակության համակեցության կերպափոխումները Մեծ մողոլների օրոք:
9. Ռեֆորմացիայի ազդեցությունը եվրոպական հասարակության վրա:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Հիմնախնդիրների հետազոտում: 2. Բանավեճեր, քննարկումներ: 3. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: 4. Էսսե: 	<p>Անհատական և մշակութային արժեհամակարգ</p> <p>Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:</p>

Միջառարկայական կապերը թեմայում

Հայոց պատմություն - Հայաստանը միջնադարում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և միջնադարյան քաղաքակրթությունները:

Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով:

Հայոց լեզու - Բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:

Գրականություն - Միջնադարյան եվրոպական և արևելյան գրականությունը, միջնադարյան պատմագրությունը և Հայաստանը:

Արվեստ - Միջնադարյան մշակույթի և արվեստի գործեր:

ՏՀՏ- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրոյունքների հետ

Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41:

Թեմա 6

Նոր աշխարհի հասարակական և մշակութային նկարագիրը

Նպատակ	
Ձևավորել Նոր Եվրոպայի հասարակագի ձևավորման և զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները հետազոտելու, վերլուծելու և արդի աշխարհի վրա ունեցած ազդեցությունը գնահատելու հմտություն:	
Վերջնարդյունք	
<p>10.6.1. Վերլուծի նոր ժամանակների հասարակարգի քաղաքական, հասարակական, սոցիալական և մշակութային զարգացումներն ու գործընթացները:</p> <p>10.6.2. Մեկնաբանի տարբեր հասարակությունների քաղաքակրթական մարտահրավերների հաղթահարման ուղիները և կազմի խնդիրների լուծման իր տարբերակները:</p> <p>10.6.3. Հետազոտի նոր ժամանակներում ձևավորված գիտական և մշակութային արժեքները և դրանց ազդեցությունը հասարակության զարգացման տարբեր բնագավառների վրա:</p> <p>10.6.4. Գնահատի նոր ժամանակների մշակույթի ազդեցությունը ներկայիս աշխարհի վրա:</p>	
Թեմայի բովանդակություն	
<ol style="list-style-type: none"> 1. Սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրի վերակառուցումը, համակեցութային հարաբերությունները Եվրոպայում: 2. Արդյունաբերական քաղաքակրթության առաջացումը. արդյունաբերական հեղաշրջումը, հետևանքները: 3. Հասարակական փոփոխությունները, առօրյա կյանքն ու կենցաղավարությունը: 4. Գիտական նորարարությունները որպես հասարակության զարգացման շարժիչ ուժ: Գիտություն և կրթություն: 5. Վերածնունդը՝ հասարակության փոփոխման խթան: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
<ol style="list-style-type: none"> 1. Աշխատանք սկզբնաղբյուրներով: 2. Հիմնախնդիրների հետազոտում: 3. Խնդիրների առաջադրում, լուծումների ներկայացում ու քննարկում: 4. Ռեֆերատ: 5. Էսսե: 6. Բանավեճ: 	<p>Անհատներ և հարաբերություններ</p> <p>Արժևորել անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում:</p>
Միջառարկայական կապերը թեմայում	
<p>Հայոց պատմություն - Հայաստանը նոր ժամանակներում, տվյալ ժամանակաշրջանի պատմական գործիչների, դեպքերի, երևույթների, իրադարձությունների համեմատություն, Հայաստանը և նոր ժամանակների Եվրոպան:</p> <p>Աշխարհագրություն - Աշխատանք քարտեզներով:</p> <p>Հայոց լեզու - Տվյալների հավաքում և մշակում, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:</p> <p>Գրականություն - Նոր ժամանակների Եվրոպական և արևելյան գրականությունը,</p>	

Եվրոպական պատմագրությունը և Հայաստանը:

Արվեստ - Նոր ժամանակների մշակույթի, արվեստի գործերը, հուշարձաններ:

Հասարակագիտություն–Գաղափարախոսությունների և հասարակարգերի ուսումնասիրում:

SRS-Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

Կապը Հանրակրթության չափորոշի ավագ դպրոցի վերջնադրյունքների հետ

Մ1, Մ7, Մ11, Մ14, Մ15, Մ16, Մ22, Մ24, Մ28, Մ29, Մ35, Մ39, Մ40, Մ41: